Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ։

ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Արքունական պալատի մի աստիճանավոր՝ այրիացած, տարեց, ամուսնացավ ջահել աղջկա հետ, մի գեղեցկուհու, զինվորական ինչ-որ պետի դստեր։ Լռակյաց ու համեստ մարդ էր նա, իսկ կինը իր գինը գիտեր։ Նիհար, բարձրահասակ, թոքախտավորի կազմվածք ուներ այդ մարդը, կրում էր յոդի գույնի ակնոց, խոսում մի քիչ խզված ձայնով, իսկ եթե ուզում էր փոքր-ինչ բարձր մի բան ասել, սուլոց էր արձակում։ Իսկ կինը փոքրամարմին էր, բայց գեղեցիկ ու պինդ կազմվածքով, միշտ շատ լավ հագնված, աչքը սուր, տնտեսվար տանտիրուհի էր։ Ամուսինը թվում էր անհետաքրքիր ամեն իմաստով, ինչպես նահանգային աստիճանավորների մեծ մասը, սակայն նա առաջին անգամ էլ ամուսնացած էր եղել գեղեցկուհու հետ, ու մարդիկ միայն տարակուսանքով ձեռներն էին տարածում, թե ինչո՞ւ, ինչի՞ համար են այդպիսի կանայք սրա հետ ամուսնանում։

Եվ ահա երկրորդ գեղեցկուհին ատեց նրա յոթ տարեկան որդուն՝ առաջին գեղեցկուհուց, ու սկսեց պարզապես չնկատել տղայի գոյությունը։ Հայրն էլ, կնոջից վախենալով, նա էլ էր իրեն պահում այնպես, ասես որդի չունի և չի էլ ունեցել։ Ու տղան, ի բնե աշխույժ ու քնքուշ տղան, արդեն վախենում էր նրանց ներկայությամբ խոսք ասել. մնաց լուռ, անխոս, ամփոփված ինքն իր մեջ, դարձավ տանը մի տեսակ ասես գոյություն չունեցող էակ։

Հարսանիքից անմիջապես հետո նրան հոր ննջարանից տեղափոխեցին քնելու հյուրասենյակի բազմոցին, կապույտ թավշապատ կահույքով կահավորված ոչ մեծ սենյակում՝ ճաշասենյակի կողքին։

Սակայն նրա քունն անհանգիստ էր, ամեն օր սավանն ու ծածկոցը կախ էր գցում հատակին։ Եվ շուտով գեղեցկուհին ասաց սպասուհուն.

— Սա խայտառակություն է։ Այսպես սա բազմոցի ամբողջ թավիշը կտրորի, Նաստյա, սրա անկողինը գցեք հատակին, այն ներքնակի վրա, որ կարգադրել էի ձեզ պահել հանգուցյալ տիրուհու մեծ սնդուկի մեջ, միջանցքում։

Եվ տղան մեն-մենակ արար-աշխարհում, սկսեց ապրել

իր միայնակ, ամբողջ տնից մեկուսացած կյանքով՝ անխոս, աննկատ, օր-օրին միապաղաղ իր կյանքով. հեզ ու խոնարհ նստում էր հյուրասենյակի մի անկյունում, տնակներ նկարում գրաքարի վրա կամ շշուկով վանկ-վանկ կարդում էր միշտ նույն պատկերազարդ գրքիկը, որ գնել էին դեռ հանգուցյալ մոր կենդանության ժամանակ, դուրս նայում պատուհանից… Քնում էր նա հատակին, բազմոցի և արմավենիով տակառիկի արանքում։ Նա ինքն էր զգում իր անկողինը իրիկունը և ինքն էլ խնամքով հավաքում էր, փաթաթում ու առավոտյան տանում միջանցք, դնում մոր սնդուկի մեջ։ Այնտեղ էր դրված և տղայի մնացած ունեցած-չունեցածը։

28 սեպտեմբերի 1940